Արձանագրություն N 8
ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **08 ապրիլի 2022թ.**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Օհանյանը,

Հանձնաժողովի և մասնագիտական խմբի անդամներ՝ Կ. Դադոյանը, Մ. Վարդանյանը, Ս. Կարապետյանը, Հ. Կիրակոսյանը, Կ. Ալեյանը, Ն. Ավետյանը և Ս. Միրոյանը:

Հրավիրված էին՝

Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ՝ Մ. Նալբանդյանը և Կոմիտեի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության խորհրդական Գ. Մելիքսեթյանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով երկփուլ մրցույթի 2022 թվականի մարտի 22-ին ժամը 15:00-ին նախաորակավորված բոլոր մասնակիցների հետ հրավիրված միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ:

Բանակցություններին մասնակցում էին նախաորակավորված ընկերությունների ներկայացուցիչները, բացառությամբ՝ «Արմստրոյ» ՍՊԸ-ի:

Քննարկում

Բանակցությունների ընթացքում քննարկվեց գնման առարկայի կատարողականի և գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրերը: Մասնավորապես քննարկվեց նախագծվող ջրամբարների տարածքների ուսումնասիրման, կադաստրային քարտեզների ձեռքբերման, հողհատկացման և հողատարածքների սեփականության վերաբերյալ գործառույթները:

Բանակցություններին մասնակից բոլոր ընկերությունների ներկայացուցիչները ներկայացրեցին առաջարկներ՝ գնման առարկայի կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) վերջնական նկարագրերը բավարար ճշտությամբ կազմելու համար, հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Ընթացակարգի արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Առաջարկել մասնագիտական խմբին՝ հաշվի առնել մասնակիցների առաջարկները, հաստատել և գնահատող հանձնաժողովի քարտուղարին տրամադրել գնման վերանայված հայտը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-6, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ա. Օհանյան
անդամներ	_____	Կ. Ալեյան
	_____	Ս. Կարապետյան
	_____	Մ. Վարդանյան
	_____	Ս. Միրոյան
	_____	Ն. Ավետյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան